շուշտ, պիտի դաստիարակեն, ինչպէս ուսուցիչը դաստիարակում է աշակերտին։

Մենք գտնում ենք, որ մեր ընդդիմադիր դերը անհրաժեշտ է այստեղ։ Մենք միշտ պիտի պահանջենք պարլամենտական կառավարութիւն՝ կազմուած պարլամենտարիզմի հիմունքներով։ Պէտք է կազմել կոալիցիա՝ ներքին բոլոր ուժերի հետ, որոնք կարող են օգնել մեզ՝ ֆինանսական խնդիրներում։ Ստեղծուած արտաքին պայմանները յաջող են հիմա. կը մնայ ներքին ֆինանսական կեանքն ևս կանոնաւորել։

Ահա իմ անելիք դիտողութիւնները վարչապետի զեկուցման առթիւ։ Ես կրկնում եմ, որ խորհրդարանը պէտք է շարունակէ իր աշխատանքները։

Ց. Բուդաղեան. — *Դաշնակցական ֆրակցիայի կողմից կարդում է հետեւեալ բանաձեւը. —*

«Լսելով կառավարութեան զեկուցումն երկրի դրութեան և կառավարութեան գործունէութեան մասին՝ խորհրդարանի դադարի ժամանակամիջոցում՝ խորհրդարանն իր հաւանութիւնն է տալիս այդ գործունէութեանը և հրահանգում է ոչ մի միջոց չխնայել, նոյն եռանդով աշխատել ամրապնդել մեր երկրի դրութիւնը՝ ճանաչելով իբրև թշնամի բոլոր նրանց, որոնք խոչընդոտ կը հանդիսանան Միացեալ և Անկախ Հայաստանի ստեղծելու գործում։

Խորհրդարանը միևնոյն ժամանակ չի կարող լռելեայն անցնել մեր քաջարի բանակի վերջին ամիսներում կատարած հերոսական գործերի մոտով և այդու իր պարտքն է համարում յղել նրան իր ջերմ ողջոյնները»։

Բանաձևի ընթերցումն ընդունւում է բուռն ծափահարութեամբ։ Դրւում է քւէարկութեան և ստանում՝ կողմ 21, հակառակ ոչ մի և ձեռնպահ 2 ձայն։

Օրակարգի երկրորդ հարցը խորհրդարանին նոր արձակուրդ և լիազօրութիւնները կառավարութեան յանձնելու մասին՝ զեկուցում է օրէնսդրական յանձնաժողովի անդամ Գ. Քեալաշեանը։ Օրինագիծն ընդունւում է և խորհրդարանին նոր արձակուրդ է տրւում մինչև հոկտ. 31-ը՝ պատւէրով, արտակարգ դէպքում խորհրդարանի նիստ հրաւիրել։

ՆՈՅԵՄԲԵՐ 11-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

Նախագահում է Ց. Քաջազնունի։

Նախարարական օթեակում նստած է կառավարութիւնը։ Ունկնդիրների բաժանմունքն ու պատշգամբը լցուած է խուռն բազմութեամբ։

Նախագահ. — *Սրանից մի շաբաթ առաջ խորհրդարանը դադար տուեց իր աշխատանքներին՝ յանձնարարելով նախագահութեանը կարևորագոյն դէպքերում հրաւիրել արտակարգ նիստ։ Վերջին օրերս տեղի ունեցան խոշոր և նշանակալից փոփոխութիւններ հանրապետութեան կեանքում, որոնց առթիւ անհրաժեշտ էր, որ խորհրդարանը լսելով կառավարութեան հաղորդագրութիւնը՝ ասէր իր խօսքը։ Նկատի առնելով այդ անհրաժեշտութիւնը՝ նախագահութիւնը հարկ համարեց հրաւիրել արտակարգ նիստ։*

Խօսքը պատկանում է կառավարութեան նախագահին։

Նախարարապետ Հ. Օհանջանեան. — *Յարգելի պատգամաւորներ. Չի անցել մէկ շաբաթ այն օրից, երբ ես զեկուցում տուի երկրի կացութեան մասին և խորհրդարանը որոշեց դադարեցնել իր աշխատանքները։ Սակայն, այսօր, դրութիւնը փոխուած է այնքան, որ խորհրդարանն անմիջականօրէն պիտի իրազեկ լինի անց ու դարձին և պիտի ասէ իր վերջնական խօսքը։*